

7. Տիպարանություն

Կեղծ բանկային (վարկային) քարտերի միջոցով փողերի լվացման սխեմա

1) Կիրառելիության շրջանակը

Սույն տիպարանությամբ ներկայացվող գործարքների սխեման կարող է վերաբերել հաշվետվություն տրամադրող անձ հանդիսացող բանկերին:

2) Սխեմայի նկարագիրը

Ստորև ներկայացված տիպարանությամբ բնութագրվող գործարքները, որպես կանոն, իրականացվում են արտասահմանյան բանկերի հաճախորդների բանկային տվյալների ապօրինի օգտագործմամբ ստեղծված կեղծ բանկային (վարկային) քարտերի կիրառմամբ: Գործարքները կատարվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ.

ա. Առևտրային գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձի / անհատ ձեռնարկատիրոջ առևտրի սպասարկման կետում տեղադրվում է վերջնասարք (POS-տերմինալ)՝ վաճառվող ապրանքների դիմաց անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով.


բ. Արտասահմանյան բանկերի հաճախորդների բանկային տվյալների ապօրինի օգտագործմամբ ստեղծված կեղծ բանկային (վարկային) քարտերի մեկ կամ մի քանի հաճախորդների կողմից տվյալ առևտրի սպասարկման կետում կատարվում են վճարումներ, որոշ դեպքերում՝ փաստացի գնված, իսկ որոշ դեպքերում՝ նաև՝ իբրև թե գնված ապրանքների (կամ մատուցված ծառայությունների) դիմաց.

գ. Կատարված գործարքների արդյունքում ձևավորված դրամական միջոցները կուտակվում են տվյալ POS-տերմինալի սպասարկման նպատակով իրավաբանական անձի / անհատ ձեռնարկատիրոջ անվամբ բացված բանկային հաշվեհամարին.

դ. Հետագայում հիշյալ հաշվեհամարին կուտակված միջոցները, որպես կանոն, ուղղվում են տվյալ իրավաբանական անձի/ անհատ ձեռնարկատիրոջ ընթացիկ գործունեության ապահովմանը՝ համապատասխան փոխանցումների կամ կանխիկացման միջոցով:

3) Գործառնությունների սխեմատիկ նկարագիրը

Ներկայացված գործառնությունների սխեմատիկ պատկերը հետևյալն է.





Կուտակված դրամական միջոցների փոխանցում/ կանխիկ ելքագրում

4) Եզրահանգում

ա. Ներկայացված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ պարունակում են հանցավոր ճանապարհով (քարտային զեղծարարությունների միջոցով) ստացված եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

բ. Կեղծ բանկային (վարկային) քարտերով կատարվող գործարքների համար հատկանշական են հետևյալ բնութագրիչները.

1) Գործարքները կատարելու փորձեր են արվում բավականին կարճ, ոչ ողջամիտ ժամանակահատվածում (որպես կանոն՝ մի քանի րոպեների տարբերությամբ).

2) Միմյանց հաջորդում են միևնույն քարտով կատարված մի շարք գործարքներ, որոնց մի մասը կարող են լինել գործարք կատարելու փորձեր (քարտի վրա առկա հասանելի գումարի ճշտման նպատակով).

3) Իրար հաջորդող բոլոր գործարքները հիմնականում կամ միևնույն գումարի են կամ համաչափորեն նվազող.

4) Գործարքները հաճախ կատարվում են «կլոր» գումարներով (օրինակ՝ 300.000 ՀՀ դրամ, 100.000 ՀՀ դրամ, 50.000 ՀՀ դրամ և այլն).

5) Նույն վերջնասարքով կատարվում են վերը թվարկված հատկանիշներով բնութագրվող մի շարք գործարքներ՝ մեկ կամ մի քանի կեղծ քարտերով:

գ. Մահմանված սխեմայով հատկորոշվող գործարքներին առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

1) առանձնակի ուշադրություն դարձնել միևնույն քարտով և միևնույն առևտրի սպասարկման կետում կատարված միմյանց հաջորդող բազմաթիվ գործարքներին.

2) կախված սպասարկման կետի գործունեության տեսակից՝ ուշադրություն դարձնել նաև փաստացի կատարված գործարքի կամ գործարքի փորձ(եր)ի գումարների չափերին, դրանք համեմատելով այդ սպասարկման կետում սովորաբար կատարվող գործարքների գումարի չափերի հետ: